

Պատմութիւն» (էջ 933), ուր կը կոչուի «Նամակ
Հպատակութեան եւ սիրոյ», եւ կը հաստատէ
թէ Հպատակութեան հետք կամ նշան չկայ այդ
թղթին մէջ, այլ պարզապէս է գիր գանգա-
տանաց կամ յանդիմանութեան լատին քարո-
զիչներու դէմ, որ ի նոր քուղա կը գործեն։
Մտերեանց կը գուշակէ նաեւ երկու զատ թուա-
կան կրող նոյն կամ նման թղթոց գոյութիւնը,
եւ եթէ գէթ «Արշալոյս Ա.» ի հրատարակու-
թիւնը ծանօթ ըլլար իրեն, մեկնութեանը մէջ
չէր սխալեր։

Յ. Թ. Տէր-Յովհաննիսեան «Ա. Ա.» ի
մէջ հրատարակած բնագիրն երկրորդ անգամ
կը հրատարակէ իր Պատմութիւն Նոր քուղայու
գրքին մէջ (1880, Բ. էջ 38—46) եւ կը
յաւելու դիտողութիւններ շամչեանի դէմ, թէ
ասիկա Հպատակութեան թուղթ չէ, եւ շամ-
չեանի յառաջ բերած պատուանուններն առ
կղեմէս ԺԱ., իրմէ յերկրումն են։ Ասոր վրայ
յենլով՝ Ա. Երիցեան եւս Թիֆլիսի «Արձա-
գանք» թերթին մէջ (1892, Թ. 80, 84—87)
ընդարձակ քննութեան կ'առնու թուղթս եւ
անգամ մ'ալ շամչեանի եւ հետեւողաց վրայ
կը ջախջախէ գաւաղանը սաստիկ յարձակմամբ,
հաստատելով որ Աղեքսանդրի նամակը Հպա-
տակութեան թուղթ չէ, այլ ամբաստանագիր,
եւ շամչեանի յառաջ բերած վերագիրներն,
զոր Աղեքսանդր իբր թէ տուած ըլլայ կղեմէս
ԺԱ.-ի, խարդախանք է եւ չկան թուղ-
թին մէջ։